



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



9

ԱՌԱՋ»-Ի ԳՐԱԴԱՐԱՆ № 67



## Հ. Յ. Գահեցութեան

1917 թիվ ԱՊՐԻԼԻ 6 – 12-Ի

ԱՎՅՈՒՆԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Եւ

ՆՐԱ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Թ. Ի Ֆ Լ Ի Ս

Տպ. «Մամուլ», Լոռիս-Մելիքեան փ., № 22.

1917 թ.



9 - Ch Q H

ԱԳՀ  
9

ՀՀՀ

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ 1917 թիւ ԱՊՐԻ-  
ԼԻ 6--12.Ի ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ԵՒ  
ՆՐԱ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Հ. Յ. Դաշնակցութեան ռայոնական ժո-  
ղովը բացւեց Թիֆլիսում 1917 թւի ապ-  
րիլի 6-ին և շարունակւեց մինչև 12-ը։ Ժո-  
ղովին մասնակցում էին վճռողական ձայ-  
ներով (գաւառներից և Թիֆլիսից) 54 հոգի,  
իսկ խորհրդակցական ձայնով քաղաքում  
գտնւած բոլոր կուսակցական մարմիննե-  
րի ներկայացուցիչները, արհեստակցական  
միութիւնների վարչութիւնները, ինչպէս  
նաև մի քանի ոչ կուսակցական մարմին-  
ների դաշնակցական ներկայացուցիչները և  
առանձին հրատիւած ընկերներ։



# ՄՈՄԵՆՏԻ ԲՆՈՐՈՅՈՒՄԸ

Ա. Թուսաստանում

Վերլուծելով յեղափոխական վերջին անցուղարձը, Հ. Յ. Դաշնակցութեան ուղյոնական ժողովը դալիս է այս եզրակացութեան, որ

1. Թուսաստանի մեծ յեղափոխութիւնը հետեւանք է.

1. Այն խոշոր քաղաքական և սոցիալ-տնտեսական պահանջների, որ 1905 թ. գոհացում չստացան:

2. Այն խելակորոյս քաղաքականութեան, որ հին կառավարութիւնը վարեց յատկապէս վերջին տասնամեակի ընթացքում:

3. Այն զուտ դինաստիական և դաւաճան քաղաքականութեան, որ նկատեց այս մեծ պատերազմի ընթացքում:

4. Իշխանութեան և ժողովրդական տնտեսութեան քայլայման:

5. Այն երկարամեայ յեղափոխական դաստիարակութեան, որ ստացել էր աշխատաւորութիւնը:

II. Յեղափոխութեան մասնակցեցին-

1. Զինւած գիւղացիութիւնը, որ նոյն է թէ զօրքը. մի զօրք, որ մեծ մոբիլիզացիաների շնորհիւ՝ կորցնելով իր կաստայական բնոյթը՝ դարձել էր ժողովրդական բանակ և ապրում էր նոյն տրամադրութիւնները, ինչ որ ժողովրդի մեծամասնութիւնը:

2. Բանւորութիւնը, որ 1905 թւի շարժումներից ի վեր աւելի փորձառութիւն էր ձեռք բերել և պատերազմի սկզբից մասնակցելով երկրի պաշտպանութեան գործին՝ քաղաքական շատ կարևոր ազդակ էր դարձել:

3. Ասաջադիմական և չափաւոր տարրերը, որ հասան այն վերջնական համոզման, թէ հին ուժիմը լիովին անընդունակ է հասցնելու պատերազմը նպաստաւոր վախճանի:

III Հսկայական թոիչքը ցարիզմից մինչև ուամկավար հանրապետութիւն՝ պէտք է բացառել.

1. Այն կատարեալ վարկարեկումով, որին հասան միապետական գաղափարները վերջին շրջանում.

2. Այն յարաբերական թուլութեամբ, որ  
ունէին չափաւոր սահմանադրական տար-  
բերը Ռուսաստանում և այն զօրութեամբ,  
որ ունէին սոցեալ-քաղաքական արմատա-  
կան գաղափարները.

3. Եւրոպական երկիրների քաղաքական  
դանդաղ անցեալը ու վորձը չկրկնելու ցան-  
կութեամբ:

4. Այն դասակարգային կապով և հոգե-  
բանական մերձեցմամբ, որ ստեղծեց բան-  
ւորութեան ու զօրքի միջև:

IV. Զգտելով բնորոշել պետութեան քա-  
ղաքական կացութիւնը ներկայ մոմենտում՝  
ուայոնական ժողովը նկատում է, որ ուժերի  
գերակշռութիւնն այսօր անցած է բանւո-  
րութեան և զօրքի ներկայացուցիչներին,  
որոնք գտնւում են առաւելապէս սոցիա-  
լիստական քան թէ բուրժուական կուսակ-  
ցութեան ազդեցութեան տակ: Յառաջադի-  
մական տարրերը ստիպւած են ի հե հե-  
տեւել աշխատաւորութեան վազքին: Զի կա-  
րելի ուրանալ այն վճռականութիւնը, որով  
լիբերալ (կադէտ և այլն) տարրերը, յանուն  
պատերազմի յաջողութեան, ընդառաջում են  
գերիշող աշխատաւորութեան պահանջ-  
ներին:

Զմոռանալով ամեն տեղ գոյութիւն ունեցող դաստկարգային հակոտնեայ շահերը՝ պէտք է ասել, որ հասարակական խաւերի գործակցութիւնը ընդհանրապէս բաւարար է համերաշխութիան տեսակէտից։

Ներքին դժգոհութիւններն ու քննադատութիւնները գրեթէ հակամարտ գործողութիւններ յառաջ չեն բերում։ Նկատելով բանւորական և զինւորական խորհուրդների ազդեցութիւնը պետական կեանքի ընթացքի վրայ՝ կարելի է ընդունել, որ կառավարութիւնը ներկայացնում է համարեա բոլոր հոսանքներն ու խաւերը և չնայած իր այլատարը կազմութեան՝ նա մինչև այժմ ընթացում է դիմոկրատիկ ճամրով։ Պէտք է նկատել սակայն, որ բանւորական և զինւորական խորհուրդներին կից՝ անհրաժեշտ է կազմել գիւղացիական խորհուրդներ, որոնք իրեն աշխատաւորական ուժաւ ոյժի վիճակի են երկրի բախտի անօրինութեան մէջ իրենց մասն ունենալու, որովհետեւ մեծ է գիւղացիութեան դերը Ռուսաստանի ապագայ սոցիալական յեղաշըրջումների ժամանակ։

Գալով ամբողջ Ռուսաստանի կենտրանական և զաւառական կառավարութեան վե-

բակաղմութեանը և հաշւի առնելով հասարակութեան անփորձութիւնը քաղաքական-վարչական գործերում՝ ուրախութեամբ պէտք է տրձանազրել ինքնազործութեան այն թափը, որ երեան հանեց հասարակութիւնը, թոյլ չտալով անիշխանութիւն՝ հին կառավարութեան և վարչութիւնների կործանման շրջանում։ Ազգերն ու դասակարգերը առանց մոռանալու իրենց ուրոյն շահերը՝ ընդհանուր առմամբ ներշնչւած են այն գիտակցութեամբ, թէ ժողովրդի ազատութիւնը կարելի է ապահովել միմիայն միահամուռ գործակցութեամբ։ Քաղաքական կուսակցութիւնների փոխադարձ վերաբերումը համեմատած 1905 թւի շրջանի հետ՝ շատ աւելի մխիթարական է, իսկ գործելակերպը շրջահայեց։

Այս բոլորը նկատի առնելով՝ Հ. Յ. Դաշնակցութեան ույոնական ժողովը գտնում է, որ—

1) Մինչև Սահմանադիր Ժողովը պէտք է ընթանալ նոյն ճամբով և պահպանել նոյն փոխադարձ վերաբերումն ու տրամադրութիւնները։

2) Պէտք է պահպանել այն զօրութիւնը, որ Ճեղք է բերել բանւորական և զինւորա-

կան խորհուրդը, համանման կշիռ տալով  
ապագայում կազմելիք գիւղացիական խոր-  
հուրդներին և ջանալով հակադրութեան  
մէջ չդնել նըանց թէ դէպի կենտրոնական  
կառավարութիւնը և թէ դէպի երկրի յա-  
ռաջադիմական տարրերը, որովհետև այդ  
աշխատաւորական կազմակերպութիւնների  
վերացումով, ինչպէս և հակամարտութեամբ  
կը վտանգւի ազատութիւնը և կստեղծւի  
երկրում անիշխանութիւն:

3) Պէտք է շարունակել աջակցել ժամա-  
նակաւոր կառավարութեանը, քանի նըա-  
գործունէութիւնը համապատասխան կը լի-  
նի դեմոկրատիայի շահերին \*):

4) Պէտք է հրապարակ հանել երկրի թուգ-  
նըւած կենսական ուժերը վարչական նոր  
կազմակերպութիւնը ապա՛ովելու համար:

### Բ. Անդրկովկասում

Քննելով իրերի դրութիւնը Անդրկովկա-  
սում՝ ուայոնական ժողովը նկատում է, որ

\*.) Պէտք է ի նկատի ունենալ, որ ուս-  
յոնական ժողովը տեղի է ունեցել 6—12  
ապրիլի այսինքն մինչև կօալիցիօն մի-  
նիստրութեան կազմելը, որի մէջ մտան նաև  
սոքիալիստական կուսակցութիւնների ներ-  
կայացուցիչները:

այդ այլատարը ու բռնտկալ կառավարութեան  
պրովոկացիոն գործունէութեան ասպարէզ  
դարձած երկրում ևս ազատութեան օրերին  
երեան եկաւ շատ աւելի համերաշխ և խելա-  
ցի գործունէութիւն, քան կարելի էր սպասել:

Մի երկրում, ուր դասակարգային և դա-  
սային հակամարտութիւնները բարդանում  
են ցեղամիջեան յարաբերութիւններով. Նը  
գտնուեց որևէ խոշոր հասարակական տարր,  
որ թէկուզ ներքուստ՝ ափսոսար հին կար-  
գերի անկումը: Ազատ, իրենց կամքին թող-  
նըւած ազգերը չգնացին փոխարքաների  
պատրաստած ճամբով, այլ կարողացան հա-  
մախմբւել մի ընդհանուր գործի շուրջ և  
ըմբոնել օրւայ հրամայականները: Զնայած  
կուլտուրական խոշոր տարբերութիւններին,  
չնայած դասակարգային և ազգային հարցե-  
րի խառնակ դրութեան՝ հնարաւոր է եղել  
առժամանակ ստեղծել մի կենսածե (modus  
vivendi) մինչև սահմանադիր ժողովը, որ  
մեր երկրի համար ևս պիտի լուծի մի շարք  
սոցիալական և ազգային հարցեր:

Մեկնելով այս միսիթարական փաստելից  
և մեր իրականութեան ոչալ պայմանների  
ճշգրիտ ըմբոնումից՝ Հ. Յ. Դաշնակցու-  
թեան ռայոնական ժողովը հրահանգում է

կուսակցութեան բոլոր մարմիններին և ընկերներին կատարեալ համերաշխութիւն պահպանել Կովկասում ցեղամիջեան յարաբերութիւնների ժամանակ և միջդասակարգային և ազգամիջեան խնդիրները լուծելիս միշտ աչքի առաջ ունենալ կուսակցութեան օրւայ լոզունգները:

### ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ԴԵՊԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Հ. Յ. Դաշնակցութեան Կովկասեան ուսունական ժողովը սրտի կսկիծով արձանագրում է այն փաստը, որ ազատագրւած ժողովուրդը ստիպւած է իր ազատութիւնը և ապագայ նորմալ զարգացումը ապահովելու համար հսկայական պայքարը մղել ոչ միայն նին կարգերի մնացորդների, այլ և Եւրոպայի կենտրոնական պետութիւնների ահարկութորութեան դէմ.

1) Կասկածից դուրս է, որ անհաւասար պայմաններում հաշտութիւն կապելը ծանրապէս կը մխասի երիտասարդ Ռուսաստանին, կը խափանի նրա սոցիալ-տնտեսական զարգացումը և կը զրկէ մեր ուսմկավար պետութիւնը ժողովրդի անհամար կարիքներին զոհացում տալու հնարաւորութիւ-

նից և այսպիսով կը վարկաբեկէ նրան լայն  
մասսաների առաջ իր գոյութեան սկզբի  
օրերից:

2) Կասկածից դուրս է նոյնպէս, որ գեր-  
ման կայսրութեան յաղթութեան դէպքում՝  
Ռուսաստանի քաղաքական կարգերը չեն կա-  
րող արագութեամբ ընթանալ ռամկավարաց-  
ման այն ճամբով, որով գնում են այսօր։  
Յաղթական Գերմանիայի թէ արքայական  
տունը, թէ պահպանողական հոգեբանու-  
թեան տէր տիրող դասակարգերը չեն կա-  
րող իրենց սահմանին կից մի մեծ ռամկա-  
վար հանրապետութիւն հանդուրժել և հնար  
եղածին չափ ոյժ կը տան ոռւս յետագէմ  
տարրերին և տապալւած արքայական տան  
վերականգնումի դործին, որի իրականա-  
ցումը՝ կաշկանդելով Ռուսաստանի դարպա-  
ցումը՝ կը հասցնի նրան նախկին կախեալ  
վիճակին։

3) Ռուս դեմոկրատիայի առաջադրած  
սոցիալ-տնտեսական մեծ ծրագրերը (օր.  
հողային) նոյնպէս թշնամական վերաբե-  
րում առաջ կը բերեն կենարոնական միա-  
պետութիւնների կողմից, որովհետեւ այդ  
ոեֆորմները այնքան արմատական են, որ  
ստանում են համաշխարհային բնոյթ և կո-

բող են մեծ սոցիալական շարժումներ առաջ բերել եւրոպական մասսաների, յատկապէս գիւղացիութեան մէջ. այդ պատճառով Գերմանիան և Նրա դաշնակիցները յաղթելու դէպքում կօգտւեն իրենց ըոնի ուժից՝ ուսւ զեմոկրատիայի վերանորոգչական եռանդը զսպելու համար:

Այս ծանրակշիռ հանգամանքները նկատի առնելով՝ ուսոնական ժողովը դտնում է, թէ որևէ հաշտութիւն Գերմանիայի և ազատ Ռուսաստանի միջև վերջինիս համար աննպաստ և անհաւասար պայմաններում անընդունելի է զեմոկրատիայի տեսակէտից, եւ նկատելով, որ հաշտութեան նպաստաւոր պայմաններ ստեղծել, ինչպէս և ազատ և ուսմկավար կարգերն ապահովել, հնարաւոր է միմիայն ստւար, կարգապահ և լաւ պարենաւորւած բանակներով՝ ույոնական ժողովը կոչ է անում բոլոր զինւորներին կրկնապատիկ եռանդով կատարել իրենց պարտքը, դասալիքներին — անմիջապէս վերադառնալ իրենց զօրամասերը և թիկունքի բոլոր գործօն ուժերին — աջակցել զօրքի պարենաւորման գործին:

Գալով հաշտութեան հիմնական պայմաններին՝ ույոնական ժողովը յայտարարում

է, որ անընդունելի են թէ աննեկսիոնիստական և թէ հակաաննեկսիոնիստական լողունգները, եթէ նրանք չունին կոնկրէտ բովանդակութիւն: Մեր կարծիքով հակագեմոկրատական է ոչ միայն պրաւած երկիրների բռնի միացումը, այլև նրանց բռնի վերագարձը հին տէրերին: Այն հարցերը, որ նախքան պատերազմը միջազգային բնոյթ ունէին (ինչպէս օր. Հայոց հարցը), ինչպէս նաև այն ազգային հարցերը, որ ծագեցին պատերազմի ընթացքում՝ պէտք է լուծեն ազատագրող ազգերը ինքնորոշման իրաւոնքով:

---

## ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

### I

Կուսակցութեան նւազագոյն ծրագիրը Հիմնադիր  
Ժողովի նախընտրական պայքարում

Նկատելով՝ որ աշխատաւոր դառակարգի յիդափոխականացումը գնալով ծաւալւում է, որ պետական կազմը պէտք է ենթարկվի Հիմնական փոփոխութեան, և որ աշխատաւորութիւնը սոցիալիստական կուսակցութիւնների ղեկավարութեամբ վճռական դեր ունի խաղալու Սահմանդիր Ժողովում՝ ուս-

յոնական ժողովը միանգամայն հնարաւոր է  
համարում Սահմանադիր Ժողովում առա-  
ջադրել կուսակցութեան նւազագոյն ծրա  
գիրը Ռուսաստանի և Անդրկովկասի վերա-  
բերմամբ իր բովանդակ ծաւալով՝ թէ քա-  
ղաքական, թէ հողային և թէ բանւորական։

Ռայոնական ժողովը հրահանգում է Արե-  
ւելեան Բիւրօին և կուսակցական մամուլին  
մշ ւկել մեր ծրագրի մանրամասները և պատ-  
րաստել օրէնսդրական նախազծեր Սահմա-  
նադիր Ժողովի համար և այդ աշխատանքի  
ընթացքում ջանալ համաձայնութեան դալու  
Անդրկովկասի միւս ազգերի և կուսակցու-  
թիւնների հետ։

II

Օրւայ պահանջները մինչև Սահմանադիր Ժողովը

Որոշելով Սահմանադիր Ժողովում առաջ  
մղել կուսակցութեան նւազագոյն ծրագիրն  
ամբողջովին՝ սայոնական ժողովը հրահան-  
գում է ծրագրային բոլոր հարցերը դարձ-  
նել գրաւոր և բանաւոր պրոպագանդի ա-  
ռարկոյ։ Իսկ մինչև Սահմանադիր Ժողովը  
իրականացնել այն պահանջները, որ չեն  
կարող սուր պայքար յարուցանել ազգերի  
և հասարակութեան տարբեր խաւերի միջև։

Այդպիսի պահանջներ ուայոնական ժողովը  
ճանաչում է.

1) Անդրկովկասի վարչական բաժանում-  
ների փոփոխութիւնը, որն իւ ականացնելու  
համար Արևելեան Բիւրօն և Կ. Կոմիտէները  
ոչ մի ջանք չպիտի խնայէն:

2) Բանւոր դասակարգի դրութիւնը բար-  
ւոքելու համար, ուր հնարաւոր է, ստեղծել  
հաշտարար կամերաներ, իսկ ուր հնարաւոր  
չէ, դիմել մասնակի բանակցութիւնների:

3) Գիւղացիների դրութիւնը բարւոքել  
նման միջնորդ մարմինների օգնութեամբ,  
իջեցնելով կալւածատիրական հողերի կա-  
պալագինը և ստեղծելով գիւղացիների հա-  
մար ուրիշ նպաստաւոր պայմաններ (ան-  
տառներից, արօտներից, ջրերից և այլն օգ-  
տըւելու համար):

4) Հնդունելով, որ հայկական շրջաննե-  
րում ամենամեծ կալւածատէրը եղած է  
պետութիւնը, ուայոնական ժողովը հրահան-  
զում է կուսակցական մարմիններին և ըն-  
կերներին՝ միջոցներ ձեռք առնել, որ այ-  
սուհետեւ պետական հողերը (օրրօչնի ստա-  
տեանները) տրւեն ոչ թէ մասնաւոր ան-  
ձանց, այլ միմիայն տեղս կան գիւղական

համայնքներին, որոնք և պիտի որոշեն այդ  
կարգի հողերից օգտւելու եղանակը:

5) Դպրոցները մնալով պետական՝ պիտի  
ազգայնանան, վարչոթեան և դասաւանդու-  
թեան տեսակէտով: Կուսակցական մարմին-  
ները և մամուլը պէտք է կոչ անեն բոլոր  
ուսուցիչներին և վարժուհիներին, որ հին  
ոեժիմի հետեանքով ցըսած են Ռուսաստա-  
նում, վերադառնալ հայրենիք:

6) Բոլոր վարչական և դասական հիմ-  
նարկութիւնների մէջ պէտք է զործածա-  
կան դարձնել աեղական լեզուները:

Իրաւաբան ընկերները և այս սկզբունքին  
համակրողները պէտք է աշխատեն հայրե-  
նիք կանչել Ենդրկովկասից դուրս ցըսած  
հայ իրաւաբաններին և պիտի պատրաստեն  
ամենակարեւը օ Էնսպոքեսի և կանոնագրը-  
քերի թարգմանութիւնը հայերէն:

### Ш

Մեր ենթադրութիւնները կաղմւելիք ընտրական  
օրէնքի վերաբերմամբ

Քանի որ անյայտ է, թէ ժամանակաւոր  
կառավարութիւնը ինչ ձեռվ է կիրարկելու  
ընդհանուր ընտրական օրէնքն Անդրկով-  
կասում ուայոն ական ժողովը հահանգում  
է Արևելեան Բիւրօին միջոցներ ձեռք տո-

նել, որ հայ ժողովուրդը՝ վարչական բաժանումների, պատերազմի ստեղծած պայմանների և այլ հանգամանքների շնորհիւ, չզրկ ի իր թւին համապատասխան ներկայացուցչութիւնից։ Գործի անյաջող ընթացքի գէպօւմ Բիւրօն պիտի հրաւիրէ արտակարգ ուայոնական ժողով, որ կորոշէ կուսակցութեան ըռնելիք դիրքը։

IV

Միջկուսակցական յարաբերութիւնները և Դաշնակցութեան նախընտրական պայքարի կազմակերպումը։

Ուայոնական ժողովը որոշեց, այս հարցի քննութիւնն ու լուծումը յետաձգել յետպայ ուայոնական ժողովին, որ պիտի գումարւի Սահմանադիր ժողովի հետ կապւած այլ հարցեր վճռելու համար։

V

Ժամանակաւոր կառավարութեան կովկասեան կազմակերպութիւնը։ Տեղական վարչական կազմակերպութիւններ։ Գործադիր կոմիտէներ։ Բանւորական պատղամաւորների խընդուրդներ։

Ուայոնական ժողովը, լսելով շրջաններից տեղեկութիւններ ժամանակաւոր վարչական օրգանների կազմութեան և գործունէութեան մասին՝ հրահանգում է Արևելեան

Բիւրօին և Կ. Կոմիտէներին միջոցներ ձեռք  
առնել, ոք ընտրութիւնները կատարւեն  
այն դեմոկրատիկ հիմքերով, ոք ընդունել է  
գործադիր կոմիտէների Կովկասեան համա-  
գումարը, ուղղել անկանոն ընտրութիւն-  
ները և ամեն տեղ ապահովել մեր կուսակ-  
ցութեանը համաշափ մասնակցութիւն տե-  
ղական վարչութիւնների մէջ:

## VI

Կուսակցութիւնը և արհեստակցական (պրոֆեսիոնալ)  
միութիւնները

Քանի ոք արհեստակցական միութիւնները  
ներկայումս կարող են բոլորովին լիզաւ-  
դինել և քա՞նի ոք միջկուսակցական յարա-  
բերութիւնները բանւորական շարքերում  
հետզհետէ մեղմանում են՝ ուայոնական ժո-  
ղովը կողմնակից է, ոք արհեստակցական  
միութիւնները լինին անկուսակցական։ Փոք-  
րամասնութեան իրաւունքներն ապահովե-  
լու համար ամեն տեղ պէտք է ընդունել  
առաջ համեմատական (պրոպրցիոնալ) ընտ-  
րութիւնների սկզբունքը։ Կուսակցական  
մարմինները պնդելու են այդ սկզբունքի  
վրայ բոլոր միջկուսակցական յարաբերու-  
թիւնների ժամանակ։ Նոյն սկզբունքով

պէտք է առաջնորդւել և գիւղացիական-  
միութիւններ կազմելիս:

## VII

Կուսակցութիւնը և կօօպերացիաները:

Ի՞նկատի ունենալով՝

1) Որ ներկայ տնտեսական կօօպերատիւ-  
կազմակերպութիւնները, այսինքն՝ սպառո-  
ղական և արտադրական կօօպերատիւնները  
ահազին դեր ունին կատարելու պարենա-  
ւորման խնդրում.

2) Որ հայկական շրջաններում ինքնա-  
վար հաստատութիւնների բացակայութեան  
պատճառով սպառողական աշխատաւորական  
կօօպերատիւնները ճամարեա միակ կազմա-  
կերպութիւններն են, որոնք գործնականա-  
պէս կարող են հայ աշխատաւորութեան  
տնտեսական պէտքերին ընդ առաջ զնալ և  
մթերքների բաշխումը կատարել օրինաւոր  
կերպով,

և 3) որ աշխատաւորական կօօպերատիւ-  
ները, հակառակ բութուազիայի չօրամիտ  
ձգտումներին՝ վերածել նրանց ակցիոններական  
շահադիտական ձեռնարկների, այնուամե-  
նայնիւ այն մնայուն հաստատութիւններն  
են, որոնք հետապնդելով ոչ միայն տնտե-

սական, այլ և կուլտուրական-սոցիալական  
նպատակների և հեռու լինելով օդակի ու  
մրցման սկզբունքից, սիստեմատիք պայքա-  
րի միջոցով աստիճանաբար քանդում են ժա-  
մանակակից կապիտալիստական տնտեսու-  
թեան հիմքերը և ապագայ սոցիալիստական  
հասարակակարգի սաղմը հանդիսանում:

— Հայ Յ. Դաշնակցութեան Կովկասիան  
Ռայոնական ժողովը՝ խորապէս գիտակցելով  
կօպերատիւների մեծ ստեղծագործական  
դերը հայ գիւղում և քաղաքում՝ առաջար-  
կում է դաշնակցական մարմիններին հրա-  
հանգել ընկերներին ամեն կերպ նպաստել  
բանւորական և գիւղացիական կօպերատիւ-  
ների կազմակերպմանը և նրանց հետ շատ  
սերտ կամ պահպանել, աշխատելով կօպե-  
րատիւները գարձնել սոցիալիստական պրօ-  
պագանդի օրգան:

Ինչ վերաբերում է վարկային ընկերու-  
թիւններին, նրանք համաձայն մեր նւազա-  
գոյն ծրագրի՝ պէտք է համարւեն առանձին  
պետական հիմնարկութիւններ, պիտի կից  
լինին սպառողական ընկերութիւններին և  
ենթարկւեն նրանց հսկողութեանը: Սակայն  
մինչ այդ համապետական ընդհանուր վար-  
կի իրագործումը ներկայումս դաշնակցա-

կան ընկերները ամեն կերպ պիտի նպաստեն վարկային ընկերութիւնների կազմակերպմանը գաւառում գոյութիւն ունեցող պայմանների համաձայն:

VIII

Կուսակցութեան կազմակերպկան սիստեմի փոփոխման խնդիր

Ուսասատանում յեղափոխութեան շնորհիւ վերացած տեսնելով՝ Դաշնակցութեան կազմակերպական հին սիստեմի անհրաժեշտութիւնը՝ ուսունական ժողովը որոշում է կուսակցութիւնը վերակազմել կովկասում հետևեալ հիմունքներով.

1) Կուսակցութեան անդամ նկատել նրանց, որ համաձայն Դաշնակցութեան ընդհանուր ժողովների որոշման՝ ընդունում են կուսակցութեան ծրագիրը, կանոնադրութիւնը, տակտիկը և իրենց կեանքում ենթարկեում են կուսակցութեան որոշումներին: Նոր անդամներ ընդունել 3—10 դաշնակցական ընկերների երաշխաւորութեամբ և տեղական մարմնի հաւանութեամբ:

Ծան. Բանուրական շրջանից անդամ ընդունել նրանց, ովքեր չեն մեղադրում հակաբանուրական շարժման մէջ և ներկա-

յացնում են երկու ընկերոջ երաշխաւորութիւն։ Կապիտալիստական ձեռնարկների մէջ վարչական բարձր սլաշտօն վարողները (կառավարիչ, դիրեկտոր. ինքը դրամատէրը և այլն) անդամ դառնալու համար պէտք է գոհացում տան ոչ միայն վերը յիշած պահանջներին, այլև պիտի ընդունեին տեղական շրջանային ժողովի կողմից։

2) Առաջին կուսակցական միաւորը համարել ամեն վայրի բոլոր դաշնակցական ընկերների ընդհանուր ժողովը, որ ընտրում է մի գործադիր մարմին քառա՞ դամ ընտրական կազմով։

3) Մեր կանոնադրութեան ապակենուոն սիստեմը զարգացնել այնպէս, որ իւրաքանչիւր մարմին՝ ծրագրի սահմաններում տեղական գործերում դառնայ միանգամայն ինքնավար։

4) Մեր կազմակերպութիւնը առժամապէս յարմարեցնել կովկասի վարչական բաժանումներին այնպէս, որ շրջանային ժողովները տեղի ունենան իւրաքանչիւր պետական գործադիր կոմիտէի ժողովի վայրում, իսկ կոմիտէները գտնեն իւրաքանչիւր կոմիսարիատի վայրում։

5) Յանձնարարել Արևելեան Բիւրօին վերը յիշած սկզբունքների հիման վրայ ըստ

կարելոյն շուտով մշակել ժամանակաւոր  
կազմական կանոններ և ուղարկել շրջան-  
ներն ի գործադրութիւն:

6) Արևելեան Բիւրօն բացառապէս զբաղ-  
ւում է կուսակցութեան Կովկասեան գոր-  
ծերի ղեկավարութեամբ: Հայաստանի բիւ-  
րօն վարում է կուսակցութեան թիւրքահայ  
հատւածի կուսակցական կեանքը: Թիւրքա-  
հայ հատւածի ուայոնական ժողովին է  
թողնուում Հայաստանի բիւրօնի կազմի լրա-  
ցումը:

Ընդհանուր բնոյթ ունեցող ստիպողական  
և բացառիկ խնդիրները (օր. Հայոց հարցի  
վերաբերեալ) կարգադրում է երկու բիւրօ-  
ների խառը ժողովը, եթէ անհնարին է ընդ-  
հանուր ժողով գումարել:

## IX

Կուսակցական մամուլ և հրատարակութիւններ  
Քննելով գրաւոր պրոպագանդի խնդիրը,  
ուայոնական ժողովը որոշեց.

1) Ունենալ թիֆլիսում մի կենտրոնա-  
կան կուսակցական օրաթերթ:

2) Վերսկսել «Յառաջ» հանրամատչելի  
մատենաշարի հրատարակութիւնը: Յանձ-  
նարարում է Արևելեան Բիւրօնին այդ նպա-

տակով կազմել մի յատուկ խմբագրական-  
հրատարակչական մարմին:

3) Հրատարակել մի ամսագիր տեստկան  
հարցերի քննութեան նւիրած:

4) Հրատարակել մի շաբաթաթերթ կուսակ-  
ցութեան տեսական հայեացքները և ծրագ-  
րային կէտերը ժողովրդականացնելու նպա-  
տակով:

Այնուհետև ոայոնական ժողովը ցանկու-  
թիւն յայտնեց.

1) Հրատարակել կուսակցական մի թերթ  
բացառապէս նւիրւած թիւրքահայ դատին  
և Հայաստանի կարիքների պարզաբանու-  
թեան:

2) Հրատարակել մի կենտրոնական հան-  
րամատչելի կուսակցական թերթ բայտու-  
պէս բանւորութեան, գիւղացիութեան—  
ընդհանրապէս աշխատաւորութեան համար,  
թերթի նախաձեռնութիւնն ու հրատարա-  
կութիւնը յանձնելով մի խումբ կուսակցա-  
կան ընկերների:

3) Քաջալերել գաւառական կուսակցական  
թերթերի հրատարակութիւնը:

X

Պարենաւորման պործ

Ռայոնական ժողովը՝ յիշեցնելով բոլոր  
կուսակցական մարմիններին և ընկերներին  
մեր գիւղացիների տնտեսական տագնապա-  
լի դրութիւնը՝ հրահանգում է ամենաեռան-  
դուն մասնակցութիւն ունենալ պարենա-  
ւորման բոլոր մարմիններում և ձեռնարկնե-  
րում, սայդ տեղեկութիւններ հաղորդել և  
առաջարկներ ուղղել Արևելեան Բիւրօխն,  
որպէսզի նա հնարաւորութիւն ունենայ  
կենտրոնական պարենաւորման մարմնի գոր-  
ծունէութեան վրայ ազդելու:

XI

Զեմստոյի խնդիր

Կովկասի ժամանակաւոր կոմիտէի (կոմի-  
սարիատի) ապրիլի 12-ի յայտարարութիւ-  
նից տեղեկանալով, որ միջոցներ են ձեռք  
առնելում շուս ափոյթ զեմստու մտցնելու  
Անդրկովկառում՝ ռայոնական ժողովը միա-  
ձայն որոշեց. մասնակցել՝ զեմստոյական  
ընտրութիւններին այն դէպքում միայն,  
եթե նախօրօք հիմնովին փոփոխւին Անդր-  
կովկասի արդի վարչական բաժանումները.  
Հակառակ պարագային՝ ռայոնական ժողովը

Ամազորում է Արևելեան Բիւրօին բոյկոտի  
ենթարկել զեմստոյական ընտրութիւնները:

XII

Աղգային համագումարի խնդիր

Քննելով Աղգային Բիւրօի հրաւիրելիք  
համագումարին մասնակցելու խնդիրը՝ ոա-  
յոնական ժողովը որոշեց. մասնակցել այն  
դէպքում միայն, եթէ այդ համագումարը  
հրաւիրվի քառանդամ ընտրական կարգով.  
Բլոկ չկազմել ոչ մի կուսակցութեան հետ,  
քայց թեկնածուների ցանկի մէջ կարելի է  
մտցնել ոչ դաշնակցական թեկնածուների  
անուններ։ Աղգային համագումարում մի  
մնայուն գործադիր մարմին կազմելու խըն-  
դիրը յանձնարարում է որոշել համագու-  
մարի դաշնակցական պատգամաւորներին և  
Արևելեան Բիւրօին։

XIII

Վիրախօս շրջանների խնդիր

Լոելով վիրախօս շրջանների պատգամա-  
ւորի զեկուցումը՝ ոայոնական ժողովը յանձ-  
նարարում է Թիֆլիսի Կ. Կոմիտէին կազ-  
մակերպութիւններ առաջ բերել այդ շրջան-  
ներում, ուղարկելով վիրախօս պրոպագան-  
դիստներ։

XIV

Ուժերի մոքիլիկացիս

Ռայոնական ժողովը կոչ է անում աշխատաւորական ինտելիգենցիային և ուսանողութեան համախմբւել դիմել դէպի ժողովուրդը և նւիրւել նրա կազմակերպման գործին։ Յանձնարարւում է Արևելեան Բիւրօին հրաւիրել բոլոր տրամադրւելի ուժերին Թիֆլիս և Բագու, ծանօթացնել աշխատանքների եղանակին և ուղղել համապատասխան վայրերը։

---



-100-

ՀՀ Ազգային գրադարան



NL0838105

492

9

490

ԳԻՆՆ Է 15 ԿՈՎ.